

ԿԱՐԾԻՔ

ԼԱԼԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐՔԻԿՅԱՆԻ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ԲԱՅԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խոսքի մասերի, առավել ևս, նրանց, որոնք ունեն տարբեր իմաստային խմբեր, հարուստ են քերականական կարգերով, առանձնանում են կապակցական բազմազան հնարավորություններով, հանգամանալից ուսումնասիրությունն առանձնակի դեր ու նշանակություն ունի մասնավորապես այն առումով, որ ժամանակակից քերականագիտությունը մասնավորապես, իսկ լեզվաբանական գիտությունն առհասարակ, անընդհատ զարգացման, ուսումնասիրությունների արդյունքում բացահատում և ներկայացնում է նորանոր իրականություններ ու առանձնահատկություններ: Այս առումով, իհարկե, առանձնանում է բայը՝ գրեթե իր բոլոր քերականական կարգերով, մասնավորապես՝ չեզոք սեռի բայերն, իրենց կապակցական բազմաբնույթ հնարավորություններով, ինչն էլ, ըստ էության, դարձել է գրախոսվող ատենախոսության բուն նյութը: Այս տեսանկյունից հիմնավորելով իր հետազոտական աշխատանքի արդիականությունը, ինչպես նաև «Հաշվի առնելով ժամանակակից հայերենում չեզոք սեռի բայերի արժույթի ամբողջական ուսումնասիրության բացակայությունը...» Լ. Գրքիկյանը «Ներածություն» բաժնում սահմանել է աշխատանքի նպատակը և դրան հասնելու հինգ առաջադիր խնդիրներ, որոնք, ասենք միանգամից, նրան հաջողվել է լուծել: «Ներածության» մեջ հեղինակը նաև հիմնավորել է հետազոտության գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության Ա ԳԼԽՈՒՄ, որը վերնագրված է «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՄԻԱՅՆ ԴԻՄԱՎՈՐ ԲԱՅԱԶԵՎԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԱՐԺՈՒՅԹԸ», Լ. Գրքիկյանն առանձնացնում և հանգամանորեն ուսումնասիրում է ինչպես չեզոք սեռի բայերի ենթակաառությանը, ստորոգառությանն ու կոչականառությանն առնչվող հարցերը, այլև բավականին մանրամասնորեն ներկայացնում է դրանց վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա կարծիքներն ու առանձին աշխատությունները,

վերջիններիս համադրման արդյունքում հիմնավորում իր մոտեցումներն ու սկզբունքները քերականական այս կամ իրակության արժևորման հարցում: Այս առումով ցանկանում ենք նշել, որ գրախոսվող աշխատանքի արժանիքներից մեկն այն ենք համարում, որ հեղինակը տարբեր հեղինակների կարծիքները ներկայացնելիս չի գնում մերժման, ժխտման կամ հակադրման ճանապարհով, այլ փորձում է դրանք ներկայացնել համադրման ու փոխլրացման ձևաչափով, ինչը գիտական հաղորդակցման ու բանավեճի առավել արդյունավետ տարբերակ է:

Ատենախոսության այս բաժնում Լ. Գրքիկյանը բնագրային հարուստ օրինակներով ներկայացնում է չեզոք սեռի բայերի ենթակաառության, ստորոգառության և կոչականառության առանձնահատկությունները՝ առանձնացնելով այդ բայերի համապատասխան դասային խմբերն իրենց ենթախմբերով: Ցանկանում ենք նշել, որ վերջիններս բավականին մանրամասն են ներկայացված՝ պայմանավորված իրենց իմաստով և կապակցական հնարավորություններով, ինչն առաջին հայացքից կարող է թվալ, թե ուսուցման կամ ուսանելու տեսանկյունից մի փոքր ծավալուն ու դժվարահարույց կարող է լինել, սակայն դա բավականին ամբողջական է դարձնում քերականական համապատասխան իրողությունն առավել հանգամանորեն ներկայացնելը: Ի դեպ՝ այս դիտարկումը վերաբերում է գրախոսվող աշխատանքի բոլոր բաժիններում ու ենթաբաժիններում ներկայացված նյութին:

Ատենախոսության Բ ԳԼԽՈՒՄ՝ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ԴԻՄԱՎՈՐ ԵՎ ԱՆԴԵՄ ԲԱՅԱԶԵՎԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԱՐԺՈՒՅԹԸ», հեղինակն անդրադառնում է չեզոք սեռի բայերի խնդրառությանը և պարագաառությանը՝ դարձյալ դրանք ներկայացնելով համապատասխան իմաստային, կառուցվածքային ու քերականական ենթախմբերով, կառավարման (անմիջական կամ միջնորդավորված) և արժույթային (միարժույթ կամ եռարժույթ) առանձնահատկություններով՝ բնագրային օրինակների հիմնավորմամբ:

Մասնավորապես՝ նշվում է, որ, ի տարբերություն բայերի միայն դիմավոր ձևերին բնորոշ ենթակաառության, ստորոգառության և կոչականառության՝ խնդրառությամբ ու պարագաառությամբ բնութագրվում են չեզոք սեռի բայերի թե՛ դիմավոր, և թե՛ անդեմ ձևերը: Այս դեպքում ուսումնասիրման նյութ են դառնում

ինչպես կապացական մասնակադապարները, այլև հոլովների հիմնական ու երկրորդական իմաստները և համապատասխան շարահյուսական պաշտոնները, ինչպես նաև կապ+կապի խնդիր կառույցները:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ներկայացված եզրահանգումները հիմնականում բխում են աշխատանքի նախորդ գլուխներում քննարկված ու ներկայացված նյութից:

Ատենախոսության բովանդակությունն ամբողջովին արտացոլված է հեղինակի հրատարակած սեղմագրում և հողվածներում:

Հետազոտական աշխատանքը թե՛ իր բովանդակությամբ, և թե՛ կառուցվածքով ամբողջությամբ համապատասխանում է թեկնածուականատենախոսությանը ներկայացվող պահանջներին, սակայն, կարծում ենք, որ աշխատանքն ավելի կշահեր, եթե դրանում տեղ չգտնեին որոշ աննշան վրիպակներ (էջեր՝ 17, 54, 89):

Եվս մի դիտարկում. համաձայն լինելով հեղինակի այն կարծիքին, որ «Դասակարգման ժամանակ նկատի ունենք բայերի ուղիղ իմաստները՝ զանց առնելով փոխաբերական(ներ)ը, քանի որ վերջիններիս քննության դեպքում կադավաղվեր բայերի արժույթի իրական պատկերը», այնուամենայնիվ, կարծում ենք, որ կարելի էր որոշ դեպքերում, գուցե առանձին պարբերությամբ, անդրադառնալ փոխաբերական իմաստով այն գործածություններին, որոնք կապակցական ուշագրավ կիրառություններ ու նոր մասնակադապարներ են ստեղծում: Առավել ևս, որ, ինչպես հեղինակն էլ նշում է եզրակացությունների մեջ. «...բառերի, մասնավորապես բայերի կապակցելիության ուսումնասիրությունն անհրաժեշտ է խոսքը ճիշտ կառուցելու, բառը տեղին կիրառելու, տվյալ լեզուն ուսուցանելու, տվյալ ժողովրդի լեզվամտածողության առանձնահատկությունները բացահայտելու և այլ տեսանկյուններից» (ընդգծումները մերն են): Իսկ խոսքում, տվյալ ժողովրդի լեզվամտածողության դրսևորման տեսանկյունից բառերի փոխաբերական իմաստներով գործածությունը ոչ միայն իմաստային, այլև կապակցական ուշագրավ դրսևորումներ ունի:

Իհարկե, այս դիտարկումներն ամենևին չեն ստվերում գրախոսվող հետազոտական աշխատանքի գիտական արժեքը, քանի որ այն, ինչպես արդեն

նշեցինք, համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման պահանջներին: Ուստի միջնորդում եմ ԲԿԳԿ-Ի՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդին՝ «Ժամանակակից արևելահայերենի չեզոք սեռի բայերի արժույթը» թեկնածուական ատենախոսության հեղինակ Լալա Հովհաննեսի Գրքիկյանին շնորհել Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝



Հովիկ Մենեքերիմի Մելքոնյան,

բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

Պաշտոնական ընդդիմախոս Հ. Ս. Մելքոնյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ՝

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի

Գիտական քարտուղար, կենսաբանական գիտ. թեկնածու,

դոցենտ՝



Կ. Պետրոսյան

03.12.2024թ.